

## ԵՐԵՎԱՆԵՐԻ ՍՏՈՐԻՆ ՇՆՉՈՒՂԻՆԵՐՈՒՄ ՕՏԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԲՈՒԺՄԱՆ ԲԱՌԱՍՈՒՆԱՄՅԱ ՓՈՐՁԸ

Կարապետյան Ա.Ռ., Դալլաթյան Դ.Ն., Գևորգյան Ա.Լ.

*«Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն, Երևան, Հայաստան*

Հայաստանում, ինչպես նաև ողջ աշխարհում շնչուղիներում օտար մարմինների խնդիրը շարունակում է մնալ արդիական: Դրա ապացույցն է հիվանդության առաջին օրը հիվանդանոց ընդունված հիվանդների փոքր տոկոսը (16%): Բարձր է նաև նախապես բազմակի և անարդյունավետ բուժում ստացաց հիվանդների թիվը (17-20%): Միակ ճիշտ բուժումը, շնչուղիների օտար մարմինների դեպքում երեխաների մոտ, դա ժամանակին կատարված տրախեոբրոնխոսկոպիան է, նույնիսկ չնչին կասկածի դեպքում:

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ-ում է գտնվում Հայաստանում միակ մանկական կրծքային վիրաբուժության բաժանմունքը, որտեղ զբաղվում են երեխաների շնչառական ուղիներում օտար մարմինների բուժմամբ: 1982 թ. բաժանմունքի հիմնադրման օրվանից ի վեր բուժվել է 7 ամսեկանից մինչև 16 տարեկան 2768 երեխա՝ շնչառական ուղիներում օտար մարմինների ասպիրացիայով, որոնց մոտ կատարվել է ավելի քան 3380 բրոնխոսկոպիկ միջամտություն: 328 հիվանդի կատարվել է կրկնակի բրոնխոսկոպիա, իսկ 145-ին՝ երեք և ավելի անգամ: Բրոնխոսկոպիան կատարվում է Էնդոտրախետալ անզգայացմամբ, միոռելաքսանտների օգտագործումով, Ֆրիդելի բրոնխոսկոպով, օտար մարմինը հեռացնելու հատուկ գործիքների կիրառմամբ: Մանիպուլյացիան կատարվում է փորձառու, կրծքային վիրաբույժի կողմից, բարդություններից խուսափելու համար (բրոնխի պատռում, պնևմոթորաքս, միջնորմի էմֆիզեմա և այլն): Վերջին տարիներին լայն կիրառվում է ֆիբրոբրոնխոսկոպիան, ինչը թույլ է տալիս ավելի ատրավմատիկ գնահատել բրոնխի վիճակը: Հիվանդությունը ժամանակին ախտորոշելու և հիվանդներին որակավորված բժշկական օգնություն մատուցելու համար, կարևոր է պաթոլոգիայի մասին առաջին հերթին տեղեկացնել ծնողներին և առաջին օղակի բժիշկներին: Ցանկացած կասկածի դեպքում, ցուցված է շտապ խորհրդատվություն, մասնագիտացված բաժանմունքում: